սիսային կողմանց և Արաբիոյ, և ինչուան ի Հնդկաստան կ'ակնարկէ։ Երբեմն եւս քաղաքական դիպուածոց վրայօք, որոց ներկայ եղած է, ինչպէս Սալահէտտինի Եգիպտոսի տիրելուն և ուրածներուն. երկայն գրուած մ'այլ Մարկոս Ալ-Բանպար անուամբ զփտի քահանայի և կրօնաւորի վրայ, որ իբրեւ քաղկեդոնական՝ հաճոյ չէ իրեն, և այլանդակ մոլորութիւններ այլ ընծայէ անոր։

Աբուսահլ հնագոյն տեղեկութիւններն առած է իրմէ առաջ գրողներէն, որոց մէջ ամենէն անուանի և գտնելը փափագելին է՝ Աբուլ-Հասան Շաբուշրի անուամբ մէկն (Ash-Shabushti, شابشتى), Ժ դարու վերջ կամ ի սկիզբն ԺԱ ին մեռած. որ գրեր է Վանորէից անուամբ գիրք մի (Քիթապ ալ-Տիարաբ)։ Շատ բան այլ առած է Թ դարու հեղինակ Սեւերոս եպիսկոպոսի գրած Աղեքսանդրիոյ կամ Յակոբկաց պատրիարքաց պատմութենէն, ուսկից նոր հեղինակք այլ շատ օգտուած են, բայց ամբողջ գործն դեռ չէ թարգմանուած յեւրոպական լեզուս։ Ուրիշ աղբիւր մ'այլ է Եւտիքիոս անուանեալ՝ բայց բնիկ անուամբ Սայիտ իբն էլ-Պատրիկ պատրիարքն Մելքիդաց, յամի 940։ Այսոր գրածն թարգմանուած է լատինարէն և տպագրուած յՕքս-